Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի կարիքների համար սեղանի լրակազմով համակարգչի, դյուրակիր համակարգչի և անխափան սնուցման սարքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով գնման ընթացակարգի

/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

02.06.2026թ.
ժամը՝ 12:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Հայրապետյան, Ս.Պետրոսյան, Տ.Ավետիսյան, Գ.Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Թադևոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)*
1	դյուրակիր համակարգիչներ	1000000
2	անխափան սնուցման աղբյուրներ	5000000
3	սեղանի համակարգիչներ	5850000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 29.05.2026թ.-ին ժամը 12:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 01.06.2026թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Էլ. հասցե	Կապի միջոցներ
1	«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ	ք. Երևան, Նալբանդյան 50, 135 տարածք	Hardware.am@yandex.com	010521477
2	«Ասատրյան Ռուզաննա Մանվելի» ԱՁ	ք.Երևան, Կողբի 2փ. 19	ruzanasatryan271@gmail.com	055773253
3	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26	h5r.gasparyan@yandex.com	077699551
4	«Նովենտիք» ՍՊԸ	ք. Երևան 0011, Արմենակ Արմենակյան 9	Sargis.Harutyunyan@noventiq.com	+374 12 525 555

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Հ/Տ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«Ասատրյան Ռուզաննա Մանվելի» ԱՁ	20000000	20 %	24000000	835000	20 %	1002000.00	Մերժված
1	2	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	9856400	20 %	11827680	9856400	20 %	11827680.00	Մերժված
2	**1**	**«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ**	**4166500**	**20 %**	**4999800**	**2416500**	**20 %**	**2899800.00**	
2	2	«Նովենտիք» ՍՊԸ	4166571.15	20 %	4999885.38	3677352	20 %	4412822.40	
2	3	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	9856400	20 %	11827680	9856400	20 %	11827680.00	Մերժված
2	4	«Ասատրյան Ռուզաննա Մանվելի» ԱՁ	20000000	20 %	24000000	20000000	20 %	24000000.00	Մերժված
3	**1**	**«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ**	**4875000**	**20 %**	**5850000**	**4485000**	**20 %**	**5382000.00**	
3	2	«Ասատրյան Ռուզաննա Մանվելի» ԱՁ	20000000	20 %	24000000	4582500	20 %	5499000.00	
3	3	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	9856400	20 %	11827680	9856400	20 %	11827680.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 01.06.2026 թվականին: Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ -ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի, կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում բացակայում են «հովացումը՝ Corsair iCUE H150I ELITE CAPELLIX XT 360», «սնուցման բլոկը՝ CORSAIR RM1000E», «համակարգչի իրանը՝ AEROCOOL APNX C1-BK-V1 ARGB»: Մասնակցի կողմից ներկայացված է օպերատիվ հիշողությունը՝ CORSAIR 64GB DDR5 6000 MHz մինչդեռ հրավերով պահանջվել է օպերատիվ հիշողությունը՝ CORSAIR 64GB VENGEANCE DDR5 6000 MHz, հետևաբար բացակայում է **VENGEANCE** բառը, մասնակցի կողմից ներկայացված է Համակարգչային մոնիտորը՝ 2 հատ Samsung 32" մինչդեռ հրավերով պահանջվել է Համակարգչային մոնիտորը՝ 2 հատ Samsung 32" LS32H804EAIXCI հետևաբար բացակայում է LS32H804EAIXCI բառը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 02.06.2026թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 04.06.2026թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Աշոտ Հայրապետյան

_____ Սասունիկ Պետրոսյան

_____ Տավրոս Ավետիսյան

_____ Գրիգոր Ավետիսյան

քարտուղար՝ _____ Հեղինե Թադևոսյան